

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 30

Գ. ՇՐՋԱՆ

27 ՅՈՒՆԻՍ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթների քաղաքական բաժանորդացիներն Կ. Պոլսոյ համար հաւանք ունենալով և զատուներուն համար Եփեսոս ուղարկելով, կանխիկ վճարելի: Արտատպութեան 12 փրակ կաւ 5 տուրքի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն լրկուողոյ: Բաժանորդագրութիւնները կը սկսին առկա առկայ վեցիկէ: Մասիս հրատարակ կ'ելլէ առկա շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է խմբին ինքնացնեն խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ աշխատանքայինները անհատաբար չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده « ماسيس » غزته سي اداره سته

ԽՐԱԾԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ ՇԱՊԻԿԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ (Կալաթա, Վոյվոտա փողոց թիւ 85) բացուած ըլլալով, մէկ ամսուան մէջ իրագործելի վերջնական իրաւաստի մը ընելու նպատակով իւր գործառնութեանց սկսած է Գիները բացարձակապէս աժան. օգտուեցէք առիթէն եւ այցելեցէք այդ ծանօթ վաճառատուներ, ուր պիտի գտնէք, ընտիր տեսակէ, շապիկ, օձիկ, թեւոց, գուլպայ, թաշկինակ, կոճակ, անուշահոտութեանց սառար տեսակներ եւայլն։

2-2

ՆՇԱՆ ՉԱՄԻՉԵԱՆԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Մահմուտ-Փաշա Իսթանբուլ խանի քալ թիւ 86

Մանազէտ հարսանեաց մամուրու եւ մկրտութեան հազուադէպու, ուր մեծ խնամքով կը պատրաստուին ամէն տեսակ ՀԱՐՄԻ ՄՈՍԵՐ գիրամատչելի գիներով։

Յիշեալ վաճառատան մէջ կը գտնուին նաեւ ամէն տեսակ մկրտութեան հազուադէպ, հարսանեկան քօղքեր, կոլանդներ, գլխարկի ծաղիկ, փետուր, էկրէշ, տերեւ, պառտէ, տաճիթէլ, քորտէլա։ Անգամ մը այցելեցէք այս վաճառատունը եւ յետոյ ուրիշ տեղէ գնեցէք, ահա զեղեցիկ առիթ մը բռնեցողք։

2-2

ՄԱՐԴԱՐԵԱՆ ԴՐԱՏՈՒՆԸ

իր ձրի գրացուցակով կը խոստանայ, Մէտրիֆէ վաւարացուած ամէն տեսակ գիրք, նոյն իսկ մէկ հատ, զրիւլ ամէն կողմ՝ Պօլոյ գինով, առանց թղթատարի ծախք պահանջելու։ Դասադիրքերու ընտրութիւն մի՛ ընէք՝ Մարգարեան Դրատան հրատարակութիւնները չի տեսած։ Դիմել Կ. Պօլիս, Մէրճան փողոց, թիւ 57, Մարգարեան Դրատան։

2-2

“AU TALON D'OR,”

ՕԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՉԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՐԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կաղերու համար պատրաստած Կաշարա, Վոյվոտա փողոց, թիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան եւ մար, -- մանաւանդ չափու վրայ չինուելիք, կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐԻԵԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՇ ՓՈՂՈՅ, ԹԻ 200

Կալաթա-Արաբի Լիսէին դէմ

Դե. Նե. Եր. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Դե. Ուր. օրերը Եկն մինչեւ 11 1/2

Կիւսկի օրերը ժամադրութեամբ

ԴԵՐՄԱՆԵՐԷՆ ԲԵՐԱԿԱՆ Եւ գրուցարկ կան ընթերցարան։ Յօրինեց ԱՆԻՊԱՆԻԿ Լ. ԲԵՐՍԵԼԷՃԵԱՆ։ Դին 2 դրուշ։

Դերմաներէն սորվել փափագող հայ աղջիկ համար պիտանի գրասպիւրք մըն է այս գրքը։



НОВУ — ROSSIA



ԱՊԱՀԱՆՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 ապրիլի մէջ գանձուած ուղահովագրիւններ 34,775,642 ֆրանկ

Երաշխաւորութեան գումար 121,765,333 »

1881էն ի վեր աղահովագրեալներուն վճարուած 164,172,000 »

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ փառափին վրայ, Մախաւան հին սեղր

Ընդհ. Գնահ. Գործակալ

Ա. ՀԻՒՐՄԻՆԶ

Ընդհ. Գործակալ
ԹԵՂՈՅՈՐ ՌԵԲԵԼ

ՄԱՍԻՍ

51րդ ՏԱՐԻ

— 27 ՅՈՒՆԻՍ 1902 —

ԹԻԻ 30

Ի ՈՎ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մասիսի յառաջիկայ թիւով. — Կերական հաստատութեանց շուրջը (նմրագրական) Տ. Ա. — Խղմանի (Հովուական տանգալիկ) ԿԵՐԱՆՏԻԱ. — Ժողովրդային առաձներ. ՏԲԴԱՏ ԵՊԻՍԿ. ՊԱՆԵՍԵ. — Բլուրն Ի վեր (Արձակ քերթած) ՎԱՐԴԳԻՒՄ. — Տեղեկին մանր. ԳԵՂԱՄ. — Յուդարկաւորութիւններ:

“Մասիս”ի յառաջիկայ թիւով

Երկու չարախօս ի վեր Մասիս կը հրատարակուի առանց թերթօնի, պահանջ մը՝ զոր յառաջիկայ թիւէն սկսեալ պիտի լեցնենք, և անոնի եղանակով մը որ քիչ մը ամէն մարդու մատչելի ու հաճելի ըլլայ մեր կողմէ եղած կարգադրութիւնը: Թերթօնը զոր պիտի սկսինք յաջորդ. թիւով, գրական դարձ մը չպիտի ըլլայ, ինչպէս էին սակէ առջինները, այլ ուղեւորական արկածներու վէպ մը՝ որուն մէջ պէտք եղած էն աւելի իրականութիւն կայ ինքնին: Ապրուած վէպ մըն է ասիկա:

ԵՐԵՐ ՏԱՐԻ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

և գրուած անձի մը կողմէ՝ որուն անունը ինչպէս բախանալ աշխարհի, այնպէս ալ տեղական հայ մամուլին մէջ օրուան խնդիր դարձաւ ամիսներով:

Մանուցանելէ առաջ թէ ո՞վ է այդ իրական ու գերազանցապէս շահեկան գրուածքին հեղինակը, բացատրենք նախ թէ ինչ պարագաներու մէջ օրուան խնդիր դարձաւ իր անունը: — Բնթերցողները կը յիշեն անշուշտ Իւմպէտ-Քրոսթօրտեան խնդիրը, որ այնչափ ընդարձակօրէն ներկայացուցաւ մեր թերթերուն մէջ: Դժոխացին խնայակամութեան տէր կ'էին մը, Տիկին Իւմպէտ, երեւակայական Ժառանգութեան լուր մը տարածելով, կրցած էր 100,000,000 ֆրանքի մօտ գումար մը շտրթել հրապարակէն, և իր մանուածադատ վարպետութեանց շնորհիւ ամբողջ քառասուրդ դար դադանի պահել այդ խարդախութիւնը՝ որ նմանը չունի տարեդրութեանց մէջ: Իր ըրածը հասարակ խարդախութիւն մը չէր, այլ խելքէ միտքէ գուրս բան մը, քանի որ կրցած էր ծուղակը բնի վրէժէ տնկած Թրանսայի պետական պանդան, և բաւական կարեւոր գումար մըն ալ անկէ շտրթել: Արդ, Տիկին Իւմպէտի գլխաւոր զօրավիգը եղած

էր իր մէկ շատ հնարամիտ եղբայրը, Ռօմէն Տ'Օրինեաք, որ քրոջը հակա ծրագրերնեւրուն իրականացման համար նոյն խօսքէն վարանած, — ինչպէս թերթերը գրեցին, — սճիր մը գործելու: Ծանօթ է նաեւ թէ խորհրդակներու բովանդակ խումբը, այսինքն Իւմպէռ-Տ'Օրինեաք ընտանիքը փախած է այս միջոցիւ, և թէ քանի ամիսներէ ի վեր բովանդակ աշխարհի ոտականութիւնը ի զուր զանոք կը վնասէ: Յաջողութեամբ պիտի պատկուին այդ յոյսերը. չիտակը անկարել է հաստատական կերպով մը պատասխանել այդ մասին: Այդ մարդիկը ամբողջ 25 տարի փրանսայի բովանդակ դատական աշխարհը և բարձր գիւրքի վրայ գլուխը դրամատէրները խաբելէ վերջ, շատ բնական է որ իրենց փախուստին վրայ ալ մտածած են, և ո՛վ գիտէ ո՞ր ազահով անկիւնը քաշուած են այս միջոցիս՝ իրենց շորթած միլիոնները վայելելու համար:

Այս տեղեկութիւնները տալէ վերջ, լսենք անմիջապէս թէ նոր թերթներ, այսինքն ուղեւորական արկածներու շարքը զոր պիտի հրատարակենք, գրուած է նոյն ինքն աիկին Իւմպէռի եղբոր՝

Ռ Օ Մ Է Ն Տ'Օ Ր Ի Ն Ե Ա Ք Ի

Կողմէ: Այդ մարդը արդէն շատ արկածալից կեանք մը անցուցած է, չընէր գրել թէ աշխարհի բոլոր անկիւնները: Իր երկոտասարգութեան առաջին տարիներուն, այսինքն ոչ շատ տարիներ առաջ, մասնաւորաբար երեք տարի մնացած է Ամերիկա, Արժանթինի Հանրապետութեան մէջ, և անցուցած է ստիպիլ պատահարներով, արկածներով, վտանգներով լեցուն կեանք մը, քանիցս գեղի բռնուած է բնիկ վայրենիներու ձեռքը, և շատ հեզ եթէ կրցած է աղաղիկ ստոյգ մահունէ մը, ազահովաբար իր տարապայման կերպով խեղցի, յանդուգն ու հնարամիտ բլլալուն շնորհիւն է: Եւրոպա դարձին, Ռօմէն Տ'Օրինեաք ինք իր կողմէ հրատարակուած հատորով մը՝ որ

ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

խորագիրը կը կրէ, պատմած է այդ բոլոր արկածները՝ զորս Մաւիսի յաջորդ թիւէն սկսեալ մաս առ մաս պիտի ներկայացնենք մեր ընթերցողներուն:

Ըսենք առայժմ թէ արկածի բոլոր վէպերը, նոյն խօսքէն վէպերնեւրուն հետաքրքրական հիւսուածքներու և յուլիչ, քսոմնելի գրուածքներու տեսակէտով ետ կը մնան այս ապրուած վէպէն՝ զոր ընտրած ըլլալիս, ինչպէս ըսինք, հաւատարապէս հաճելի պիտի թուի Մաւիսի բոլոր ընթերցողներուն անխորհրդով հետեւ ո՛չ թէ միայն գրականութեամբ հետաքրքրուող անձեր, այլ պարզ արհեստաւորէն սկսելով մինչեւ զարգացած մտքի տէր անձերը հաւանար ախարհով պիտի կարգան զայն, և կարգալէ վերջ ալ չպիտի կրնան բնաւ ըսել թէ ժամանակին կորսնցուցին:

Ռւբէն Մաւիսի յառաջիկայ թիւով:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Սանասարեան Վարժարանը Կարինէն խա-
րիւր փոխադրելու խնդիրը թէեւ վերջնական
որոշումը մը յանգած չէ տակաւին, բայց խնա-
մակալութեան եւ կտակակատար Պ. Կարա-
պետ Եղեանցի արամադրութիւնները այն կողմ
թափած են արդէն, եւ վերջերս Սորսորի վանքը
ու յիշակայ հողերը աչքէ անցընելու պաշ-
տօնով զրկուած ճարտարապետին քննութեան
ապրիլին քն ալ նպաստաւոր կերեւայ փոխադ-
րութեան ծրագրին, առանց յիշելու լրագրու-
թեան գրեթէ միահամուռ համամտութիւնը :

Երկու բերկրառիթ լուրեր, որոնք հրա-
տարակուցեան շարժումս մէջ, այժմէութիւն
մը կուտան խնդրին եւ իրական հաւաստիք
մը կընծայեն այն գոհունակութեան զոր
Խարբըղի հայ համայնքին առթած է՝ Սանա-
սարեան վարժարանը հոն՝ իրենց մէջ ունենա-
լու վստահութիւնը, Այդ լուրերը, — զորս
հաղորդած էր Ծաղիկի թղթակիցը եւ քանի
մը թերթեր ալ փութացին արտասուել, —
մանաւոր հաճոյքով մը կ'արձանագրենք
Մալիա մէջ : Խարբըղի ծանօթ աղագայինե-
րէն Պողոս էֆ. Միսաքեան իր հոյակապ
ուսնը ձրխաբար կը դնէ Սանասարեան խնա-
մակալութեան արամադրութեանը տակ, որ-
պէս զի մինչեւ վարժարանին կառուցումը
Սորսորի հողերուն վրայ՝ կարելի ըլլայ աշա-
խատանքուն Խարբըղ փոխադրութիւնը եւ
գաղափարութեանց շարունակութիւնը : Կրթա-
փութեան այս ինքնաբեր ու գեղեցիկ օրի-
նակը, որ գաւառէն կը հասնի ու գաւառացիի
մը կողմէն կը արուի, շատ աւելի ազդեցիկ կը
գանայ երբ աչքի առջեւ բերենք թէ Պու-
այ թաղերուն մէջ գալորոցնի ունինք — ինչ-
պէս Տօլապ Տէրէինը — որոնք հինցած,
խորտու ու վատառողջ մթնոլորտով շէնքե-
րու մէջ կը շարունակեն մնալ, ուր ազաւքը
լը խառնին ու զատախարակները նողկանքով
լը մտնեն սեւին ներս : Ու ոչ մէկ հարուստ
այս վիճանն մտածում մը ունեցած է՝ իր
բազմաթիւ կալուածներէն, աւուներէն մէկը,
չէթ առժամապէս, արամադրել զպրօցի հա-

մար : Պատրիարքական կրկնակ այցելութիւնը
զոր երկու տարի յաջորդաբար վայելեց այդ
վարժարանը — քանի որ անցողաբար Տօլապ
Տէրէի վրայ մասնաւորեցինք խօսքերնիս —
յոյս ներշնչեց թէ այդ կրթական աղքատիկ
յարկը հիմնական նորոգութիւն մը պիտի կրէ,
եթէ երեւք զայն ուրիշ շէնքի մը մէջ փո-
խադրելու դրամական զիւրութիւնը չի դո-
նուի : Ո՞ր Բերապին մտածեց սակայն այս
պէտքին վրայ :

Երկրորդ լուրը, որ դարձեալ Խարբըղէն
կուգայ, Բողոքական աղագայինի մը հողային
նուիրատուութիւնն է՝ Սանասարեան վարժա-
րանին կառուցմանը համար : Յովհաննէս էֆ.
Խարբըղեան՝ Մէզըրէի մօտերը իր ունեցած
60,000 քառակուսի կանգուն տարածութեամբ
յարմար գետինը յօժարակամ կը նուիրէ Սա-
նասարեան խնամակալութեան, փափաք յայտ-
նելով որ անոր վրայ կառուցուի վարժարանը :
Յստակ կերեւայ ուրեմն որ, Խարբըղի Հայ
Բողոքական հասարակութիւնն ալ մասնաւո-
րապէս կը հետաքրքրուի եւ համակիր է վար-
ժարանին փոխադրութեան գաղափարին . եւ
թէ, խնամակալութիւնը՝ զայն վերջնապէս ու-
րոշելուն ու գործադրութեան գնելուն պէս՝
նիւթական ամէն կերպ զիւրութիւններ պիտի
ընծայուին իրեն, թէեւ բարեյիշատակ կտա-
կարարը՝ իր մեծագումար կտակովը՝ պէտք
թողուցած չըլլայ ուրիշին օժանդակութեանը
ու նուիրատուութեանը : Խարբըղցիներուն
այս բարի արամադրութիւնները իրենց բարո-
յական նշանակութիւնն ալ ունին, եւ եթէ
խնամակալութիւնը նախամեծար սեպէ Սոր-
սորի վանքն ու հողերը՝ Մէզըրէի մօտերը արա-
մադրուած գետինէն, — ինչ որ հաւանական
է, — դարձեալ Արթին էֆ. Խարբըղեանի
նուիրատուութիւնը չի դադրի գնահատելի
նախաձեռնարկ մը նկատուելէ(*) :

(*) Ծ. — Զորեքշաբթի օրուան Բիւզանդիոնի մէջ
հրատարակուած կարգ մը մանրամասնութիւններ՝ ստուեր
կ'աձեն այս հողային նուիրատուութեան առաջարկին վրայ,
քիչ մը տկարացնելով անոր Յողած աւազին տպաւորու-

Մեր կրթական հաստատութեանց նկատմամբ անոնց վարիչ մարմիններուն օգտաշատ մէկ խորհուրդը շատ հազուադէպ կերպով, առջի վայրկեանէն, այնքան խրախուսիչ տրամադրութիւններու եւ իրական ձեռնադրութիւններու առիթ տուած է՝ որքան Սանասարեան վարժարանին փոխադրութեան խնդիրը, ներկայ պարագային մէջ:

* * *

Միօրինակութիւններ կան որոնք, առանց պայմանադրական բլաշու, անխուսափելի կը դառնան: Ասոնց կարգէն է՝ գալորոցական գործը իր է՛ն տաք շրջանին մէջ գտնել՝ տարուան այս տաք եղանակին մէջ, ու անով զբաղիլ: Ամէն վարժարան, թաղային թէ մասնաւոր, իր ամալիւրջի հանդէսները ձեռնացաւ եւ իր շրջանաւարտներն ընծայեց: Քրոնիկները լայն աւել մը ընծայեցին անոնց, ու նոյն իսկ գաւառային թղթակիրները գրչի ճարտար փոխանցումներով՝ երկու լուրի մէջ՝ տեղ սանցուցին իրենց մրցանակաբաշխութեան հանդէսին նկարագրութիւնը:

Եւ ինչո՞ւ չընէին, ինչո՞ւ օրագրութիւնը եւ պարբերականներն ալ չհիւրընկալէին իրենց շուրջը եւ իրենցմէ հետեւն գտնուող կրթական հաստատութեանց վիճակը պատկերացնող նօթերը որոնք աստիճանացոյցն են նորահաս սերունդին մտաւոր զարգացման: Աւելի կենսական աշխատութիւն մը կարելի՞ է երեւակայել որ եւ է համայնքի համար՝ քան դաստիարակին եւ ուսանողին աշխատութիւնը, ձեռք բերուած ու ակնկալուած արդիւնքը: Քննադատութիւնն ալ իր բաժինը ունեցաւ օրուան նիւթին մէջ, ուսուցիչներու քննիչ յանձնաժողովէն սկսելով՝ մինչեւ այս կամ

թիւնը, եւ սա նպատակակէտը վերագրելով խորրութեան էֆֆին՝ Թէ ինքը շատ ընդարձակ գետններ ունենալով այդ կողմերը, զանոնք արժեքներ կուզէ՝ Սանասարեան վարժարանին կառուցման յատկացնելով անոնց մէկ մասը, եւսլին՝ Նոյն իսկ ԺԹԵ ճիշդ ըլլալ այս մեկնութիւնը, դարձեալ խորրութեան էֆֆին ցոյց տուած պատրաստակամութիւնը նշանակութեան զօրք չէ եւ մերժման պարագային իսկ՝ զոնուանակութիւն առթելու բնութիւն ունի: Երանի Թէ ուրիշ հարուստներ ալ, իրենց հոգեբուն ու կառուածներուն մէկ մասը շէնցնելու նպատակով՝ միւս մասը տրամադրէին դպրոցի համար:

այն վարժարանին ուղղուած քննադատութիւններ որոնց մէջ միշտ իրաւացի լիակէ կայ, չափազանցութիւնները մերժելով՝ Արշոյր գրուած քննութեան ալ ողին կը ձգտին որ ուղղութեան, — առողջ կրթութիւն մը առողջ, պատրաստել զանոնք առեւտրի եւ գործի ասպարէզին, որուն սահմանուած ըլլալու եւ մեծագոյն մասով, եւ չի ծանոթութեանը աւելորդ գիտութիւններով — Յաւել է որ այսքան պարզ ու տարրական սկզբունք մը՝ տեսականապէս ըմբռնուած՝ ճշդիւ ու լայնօրէն կիրարկուած չէ տակաւին միւր զմեռ լոյցներուն մէջ: Պէտքէրեան վարժարանը Ռօպէրդ Քոյէթը եւ Վիէննայի Միլիթարայի Բանկայի վարժարանը ամէնէն աւելի այդ ուղղութեան հետեւող հաստատութիւններն են, տարուէ տարի բարեփոխումի եւ կատարելագործումի ճիգերով: Ռօպէրդ Քոյէթը, օրինակի համար, իր վերաբացումի աղբիւրն մէջ կը յայտարարէ թէ «կարգադրութիւններ կըսած են նոր դիպրութիւններ ընծայելու համար վաճառականութեան ուսման» եւ Բանկայի Միլիթարայի վարժարանին անդեկադրին ալ, զոր կարգուելու առիթը ունեցանք, չա՛տ գործնական աստիճաններ կը պարզէ գիտութեան, արեւտարի, ճարտարարուեստի ընդունակ աղանքի պատրաստելու տեսակէտով: Հ. Գալիլէյի վրդ. Մէնէփիշեան, որ իրեն համար սիրելիական զբաղում մը, մասնագիտութեան մը ըրած է այդ վարժարանին տեսութիւնը, իր անդեկադրին սկիզբը գերմանացի երեւելի մանկավարժի մը հետեւողութեամբ խորհրդածութիւններ կընէ որոնցմէ կրնան օգտուիլ ամէն ծնողք: Բանկայի վարժարանին ներհուն ու եռանդուն վարիչը իր ուղղութեանը կը դարձնէ մասնաւորապէս «խորրութեանը աղբիւր տղու իրեն յարմար ասպարէզ մը ընտրել տալու» գիտակցութեան վրայ որոշ համար նկատելի կէտերն են. 1. — Մնողը ընկերական զիրքը, 2. — Տղոց վրայ նշանուած յատկութիւններն ու ասպարէզի մը համար ունեցած միտութիւնը, 3. — Անոնց մտաւորական եւ մարմնական ընդունակութիւնները, 4. — Որոշ նպատակի մը հետեւ ներու համար ծնողաց զբաղման վրձնիլ

հարկաւոր միջոցները — Ու հինգերորդ մըն ալ
վաւելցնէ, է՛ն կարեւորը , թէ չկայ հասարակ
կարծուած արհեստ մը որ չի կարենայ ապա-
նով կրթուած պատանիին ապագան : Հա՞րկ
է աւելցնել թէ այս տառղջ ըմբռնումով աւ-
տու մը յարաճուն զարգացում մը եւ յառաջդի-
մութեան մէջ կը դնէ իր ինամքին յանձնու-
ած հաստատութիւնը , ինչպէս արդիւնքն ալ
անտեսեցաւ վերջացող շրջանին մէջ ուր ,
Բանկայթիի Միթիթարեանց վարժարանը իր
զբօթական սկիզբէն ի վեր չունեցած թիւով՝
106՝ աշակերտ ունեցած է եւ յառաջիկայ
շրջանին համար դիմումներն ու արձանագ-
րութիւնները աւելի բարձր թիւ մը կ'ապա-
նովն այժմէն :

Գալով Պէրպէրեան վարժարանին , անիկայ
վաղուց արդարացուցած է իր համբաւը ,
տարուէ տարի հասուցած շրջանաւարտներովը
դո՛ւք դիրք մը եւ անուն մը ունին իրենց
հարած ասպարէզներուն մէջ :

Ինչո՞ւ նոյն բանը չկրնայինք ըսել , այս
խտանութեամբ ու այս անկեղծ համոզումով ,
մը թաղային վարժարաններուն համար ալ
ըզանդապէս , մինչդեռ հազիւ անոնցմէ
մէկերկուքը կրնանք ցուցնել իբր բացառու-
թիւն :

S. U.

Ք Լ Ո Ւ Ր Ն Ե Վ Ե Ր

(Սեռակ Բերքուած)

Բըլուրն ի վեր

Կեղեմ ամեն իրիկուն ,

Խոնջած ու նրկուն :

Մինչ փայտին ժրխորներ

Կը մարին հեռուն

Յամբերէն .

Եւ արեւուն

Կարմրահալ գունք շողուն ,

Կը խուրի սակաւ , դեմի լեռներէն .

Մինչ լուսաբար ,

Բըլուրն ի վար ,

Կ'իջնեն զբարք հոսն ու հոսալ ,

Եւ կուզուի լուռ ու դանդալ ,

Միտս յոգեռու մեջ տարուբեր ,

Բըլուրն ի վեր :

Հոն կը յաժիմ մըսաքափառ

Ու իտրագին ,

Հեռուն քողած սին ու յամառ

Հոգերը կեանքին .

Հովուն սրւած վիճարս բոլոր ,

Երկինք նայուածքս պղտոր :

Հոնկէ կը դիտեմ բարդ բարդ լեռներուն

Հսկայ ու շքեղ կայքն անմասշեղի ,

Դաւթը՝ երփնազան ծաղիկներով լի ,

Շրդաւտ ամպերուն խօլ վագր հեռուն .

Հոն կըզայ հոգիս մուրը իջնելուն

Անո՛ւտ , անտոտ հեռանքը խորին .

Ու ներսէս աննառ յոյգեր կը բըռին ,

Դոգը երբեքին :

Երկինքն ի վեր ,

Ջինջ ու լուսաներ .

Դողք ու փափուկ

Հարսի մը հանգոյն ,

Հորիզոնին շատուերներէն խուսափուկ ,

Կը ցցուի լուսնին՝ կուսային .

Ճակասք տգոյն :

Մինչ արծաթ ցոլերէն յուշիկ կը սահին

Սղջամուղջին մեջէն :

Հեռուէն , ի՛նչ անուտ , ի՛նչ հեռոտ կը հնչեն ,

Երկայնքը համբուն ,

Չայներն յամեցող կարաւաններուն :

Երկինքն ի վեր

Կեղեմն խոնքս բոլոր ,

Սուրբ քէ մեղաւոր :

Ու կը քեքեւնայ պահ մը իմ հոգին ,

Աւարտին ամեն ,

Ռամիկ ու դժնէ անձկութիւններէն ,

— Յեցերը կեանքին — :

Բըլուրն ի վեր , բըլուրն ի վեր ,

Ո՛վ հեռակայ պաշտելիս ,

Օր մ'ալ ուրիշներ պիտի տանին զիս :

Մտով կարելիք :

Ու վերջին վերելքս պիտ'ըլլայ ասի ,

Հեւս ցոլերուն դեմ վերջալոյսի ,

Հո՛ն , երկինքին մօտ , ժրխորէ հեռու ,

Հուսկ անդորրը գրկելու :

Խ Ղ Ճ Մ Տ Ա Ն Ք

(ՀՈՎՈՒՍԱԿԱՆ ԱՒԱՆԳԱՎԷՊ)

(Բ. եւ վերջին մաս)

Ան իրիկունը Սարգսենց Յակոբ նստած էր տանը առաջըր ու կը շոյէր երկու ամենի գամբուեր՝ որոնք Սերգայի հօտը գամ առաջնորդելէ վերջ եկած էին այդպէս իրենց իրիկունան կերը խնդրելու։ Ալեհեր հսկայ մըն էր գիւղին այդ տանուէրը, սպիտակ մօրուքով մը՝ որ մինչեւ պորտը կ'իջնէր, եւ երկու խոշոր աչուքներով՝ որոնք հակառակ կոշտ ու խիտ խորշումներէ չըջապատուած ըլլալնուն, տակաւին պահած էին իրենց երբեմնի առողջ ու կեանքոտ վառքը։ Պեղուծի մը միջոցին գտնուած հին ու բորբոսած զարդեղէն մը կարծես այդ դէմքը՝ որուն վրայ աչքերը անաղարտ մնացած էին թանկագին քարերու պէս։

Գիշերը բաւական թեւ տուած էր արդէն, ու Սարգսենց Յակոբ կը պատրաստուէր սուն քաշուելու, երբ դրան հանդիպակաց կողմէն երկարաձգուող աղմուկ մը լսուեցաւ։ Զի մը դէպի գիւղը կը սուրար արագօրէն։ Ծերունի տանուէրը որ ոտքի ելած էր, կանգ առաւ դրան սեմին վրայ եւ սպասեց։ Քանի մը վայրկեան վերջ ձին իրեն հասաւ կատաղի վազքով մը՝ եւ Մարիա՝ նեախ մը պէս հօրը առջեւ նետուեցաւ՝ տակաւին կենդանին կանգ չառած։

Սարգսենց Յակոբ անորոշ աղաղակ մը արձակեց։ Աղջկան վրայ ամէն բան ցոյց կու տար թէ վայրագ կռիւ մը մղած էր. հագուաները վերէն վար բղքտուած էին, մաշերը խառն ի խռոռն ինկած կռնակն ի վար, եւ կուրծքին վրայ ալ, վիզէն մինչեւ ստինքներուն անցքը՝ արիւնի անհաւասար ծիրեր երկարած էին, ծիրեր՝ զորս գիշերուան կծու հովը սառեցուցած էր յուզմունքէն ուռած մորթին վրայ։

Ծերունին սակայն ժամանակ չունեցաւ հարցում մը ընելու։

— Հայր, հայր, գոռաց Մարիա յուզմունք

քէն ընդհատ ձայնով մը, հայր, քեզի ալ մահն է բաժին երկինքին տակ...

Յետոյ՝ ձեռուքներովը իր բղքտուած նստածութիւն երկու փերթերը բռնած՝ աւելցուց։

— Հայր, ալ քեզի մահն է բաժին... եւ ինծի ալ... որովհետեւ աղջիկդ անպատուեցաւ...

Կատաղութեան աղաղակ մը թռաւ ձեռունին կուրծքէն։ Իր աղջիկը անպատուեց... բայց ատրկա ամէնէն մեծ, ամէնէն ծանր անարդանքն էր որուն հայր մը կրնայ ենթարկուիլ։ Գիւղը իր ահարկու օրէնքը ունէր այդ մասին. տան մը անպատուիչը անպատու ճառ պէտք էր որ մեռնէր, եւ կամ պէտք էին իրենց օրերուն վերջ տալ բոլոր անոնք որոնց վրայ անպատուութեան արատը կրնար ցատքած ըլլալ։ Ապա թէ ոչ կեանքը իրենց համար ամօթի չղթայ մը կը դառնար ալ անկէ ետքը, եւ որչափ ատեն որ անպատուիչ իր իսկ արիւնով իր ոճիրը քաւած չըլլար, չէին կրնար երբեք յոյս դնել մարդոց համար ման ու յարգանքին վրայ։

Այս օրէնքը շատ վայրագ էր, բայց շատ ալ պարզ, եւ Սարգսենց Յակոբ՝ որ մինչեւ ան ատեն բուխակ համայնքին առջեւ ճակատը բարձր պահած էր, եւ որուն ամէն մարդ պատկառանքով կը մօտենար, երբեք չպիտի թողուր որ անպատուութիւն մը այդ պէս անպատիւ կերպով քայ իր տունն ու անունը աղարտէ։ Վրէժխնդրութեան, անարկու եւ անհերքող վրէժխնդրութեան մը գլխուցումը գրկեց իր հօգին, եւ ձայնը այդ զգացումին առթած կատաղութեամբ յղէր էր երբ հարցուց իր աղջկան, մէկ ոտքը արդէն իսկ ձիուն ասպանդակին մէջ։

— Ո՞վ է սրբաբիղծը, Մարիա,

— Սերգոն, պատասխանեց աղջիկը՝ ռանց խղճահարութեան։

Ծերունին ձիուն վրայ ցատքած էր։

— Ո՛ր է հիմայ, հարցուց նորէն :

— Վերը, ցից սարին կատարը :

Ձին՝ երկու կրունկներու խաղաղութեամբ զգալով կորեւուն վրայ, սկսաւ ուրաղ կատարի վազքով մը, մինչդեռ Մարիա, իր Պետափրէսի վրէժխնդրութեամբ արեւելի, սաղայելի ժպիտով մը կը պոռար մութին մէջ :

— Գնա՛, հայր, դնա՛, եւ մի՛ մոռնար որ անպատուութիւնը տանդ վրայ իջած է . . .

Մերունին անհետացած էր արդէն :

* * *

Մարիայի մեկնումէն վերջ Սերգո ընտել չարժամ այն ժայռին վրայէն՝ ուր զինքը գտած էր կռուին խոնջէնքը : Անգամ մը միայն, դաշտին ծայրէն՝ աղջկան վազքը տեսած էր տարտամ տեսիլքի մը պէս, բայց աւելի ուշադրութիւն չէր ընծայած : Չորս զին պզտիկ շշուկ մը անգամ չէր բարձրանար, եւ հետզհետէ խոսացող մութին մէջ դաշտն ու մօտակայ լեռները իրար խառնուած էին, ու սեփ սեւ զանգուած մը միայն կազմած : Յուրտ հով մը երբեմն երբեմն աղիւն սոյլով մը կը գալարուէր սարին կատարը, եւ հոս ու հոն պզտիկ ու կարճատեւ թռանքներ ձեւացնելէ վերջ կը չիջէր աստղի արագութեամբ մը, անմիջապէս վերջ կրկին երեւան ելլելու համար : Անջրպետը տեսած էր ամբողջովին, եւ տեղ տեղ մութը տին անտիճան չեղտուած էր որ անկարելի էր երկինքն ու երկիրը իրարմէ զանազանել :

Սերգո կը մտածէր՝ առանց խի չարժուած մը ընելու, երկնային շանթ մը կարծես զինքը քարացուցած էր այդ ցից բարձունքին վրայ՝ որ հսկայ թևի մը պէս դէպի երկինք կը ցնուէր դաշտին ծոցէն : Գլուխը, այն ցուլի հնաբնորէն դուրսը որ պահ մը առաջ առնական խորիստ ցայտքով մը ուսերուն կ'իջխէր, անխիղ անկումի մը մէջ դացած կ'զգար էր իր թռնոքին, ու կը մնար ատանկ՝ մեղքի մը պէս վիղն ի վար կախուած : Սրբապղծութեան գաղափարը միշտ իր խոռովքը կու տար ալուն հողին : Իրաւ է որ կրցած էր ինքզինքը զսպել, եւ հակառակ Մարիայի փորձիչ գեղեցկութեան ու հրաւերներուն ինքզինքը հեռու պահել անկէ, բայց վերջապէս վայր-

կեանի մը տկարութիւնը զոր ունեցած էր կռուէն առաջ, խոչոր համեմատութիւններով կը ներկայանար իրեն : Համարյոք զոր այդ միջոցին փոխանակած էր աղջկան հետ՝ եւ որուն վառքը, նոյն խի մաքառումի յուզմունքէն վերջ տակաւին կը զգար շրթունքներուն վրայ, յանցանք մը չէ՞ր ինքնին, խղումը այն նուիրական կապին՝ որ ճակատագրականօրէն պէտք է գոյութիւն ունենար տիրոջ եւ ստրուկին միջեւ : Իր աչքին, տանուտիրոջ աղջիկը անվթար չէր ելած ձեռքէն, ինչպէս որ պէտք է ըլլար . ու կը մտածէր թէ ամբողջ սրբապղծութիւն մը դորձած էր այդ մէկ վայրկեանի ինքնամոռացման միջոցին, եւ ատիկա տուայտանք կու տար իրեն : Միտքը չէր բերեր թէ կռուած ատեններին վայրագօրէն խոշտանգած էր իր տանուտիրոջ աղջիկը, միտքը չէր բերեր թէ մատուցներուն եղունգները քանի քանի անգամներ զիշակերի մը մագիլներուն պէս աղջկան կուրծքը պատռւած էին : Միտքը չէր բերեր նաեւ այն բերտ թափը՝ որով Մարիան գետինը դարկած էր ափ մը հողի պէս, յաղթանակի ուրախութենէն գինովցած : Բոլոր ատենք թերեւս բնական բաներ մը կ'երեւային իրեն, բայց այդ համբոյրը, այդ ակնթարթի մը սխալը, ո՛հ, ատիկա սրբապղծութիւն մըն էր, ու կը զգար թէ իր կորույթի, կարչնեղ իրանը ծղօտի մը պէս կը կքի յանցանքին ծանրութեան տակ :

Շատ չանցած, Սերգո կատարեալ համոզում մը գոյացուց այդ մասին : Սրբապղծ մըն էր ինքը, եւ իրեն անանկ կու գար թէ հովին իւրաքանչիւր սոյլը այդ տխուր, խաւարունակ բառը կը նետէ իր երեսն ի վեր : Ի՞նչ պիտի ընէր ատկէ վերջ : Ա՛լ իրեն համար անկարելի էր գիւղ ոտք կոխելը, սորովհետեւ ոճիրը զոր գործած էր, չէր կրնար երբեք ազալաւ մը ունենալ : Կամ մահ կամ հեռացում այդ համայնքէն ուր անպատուիչի մը քայլերը երբեք արձագանգ մը չէին կըրցած դառնել :

Սերգո բոլորովին գրաւուած էր այս մտածումներով ու չլսեց արշաւասոյր ձիւն մը դա-
կիրաւով մը դաշտին լուսութիւնը խզելէ վերջ

դադրեցաւ սարին ստորաւը : Հօտալը իր խռոված խիղճին միայն տուած էր ականջնէն ըր , եւ գործած յանցանքին համեմատութիւնները կը մեծցնէր չարունակ , ինչ որ վայրագ հաճոյք մը կը պատճառէր իրեն : Հոս վը կը սուլէր անընդհատ , ու տղան միշտ տխուհեա կը կարծէր թէ գերբնական անտեսանելի էակներու ամբողջ խումբ մը չարունակ « սրբապիղծ , սրբապիղծ » , կը պոռայ իր չորս կողմէն :

Յանկարծ մարդկային ձայն մը թնդաց ետեւէն , ձայն մը որ կատաղութենէ բորբոքած կուրծքէ մը կը ժայթքէր , եւ որ իր կարգին միեւնոյն անկարեկիր դատապարտութիւնը կը դրուագէր շուրջի լուսթեան կուշար .

— Սրբապիղծ . . .

Հօտալը ցնցուեցաւ , բայց չհաւատաց իր ականջներուն : Զայնը երկրորդ անգամ մըն ալ պատռեց լուսթեանը .

— Սրբապիղծ . . .

Այս անգամ սարսուռ մը օձի ցուրտ հպանքով մը մինչեւ հօտալին սիրտը թեւ տուաւ : Այն անկարելի էր տարակուսիլ : Մարդ մը կար իր ետին , մարդ մը՝ որուն կուրծքէն բլիսող վայրի շունչը կը զգար իր ծոծրակին վրայ : Սակայն ո՞վ կրնար ըլլալ այդ մարդը , ո՞ր անվեհեր հողին կրնար այդպէս խիզախել գիշերուան արհաւիրքին դէմ , եւ բարձրանալ մինչեւ այդ ցիւց սարին կատարը՝ որուն վերելքը լերան այծեամ մը անգամ չպիտի ուղէր փորձել մօթին մէջ :

Զայնը կրկին գոռաց իր ականջներուն տակ .

— Սրբապիղծ . . .

Սերգօ սկսաւ վախնալ : Մարդը որ այդչափ յանդուգն ու աներկիւզ յայտնութիւն մը կ'ընէր գիշերուան մէջ , եւ որուն կատաղի ձայնին շեշտերը կարծես մինչեւ երկինք արծազանգ կուտային , վրէժխնդրութեան ոգի մը երեւցաւ իրեն , ու սարսափի դող մը խեղդեց սրտին զարկը : Քիչ ետքը , կորովի ձեռքի մը սեղմումը զգաց վրդին վրայ , բայց ինքնապաշտպանութեան դադափառն իսկ չարթնցաւ մաքին մէջ : Սրբապիղծ մըն էր ինքը , եւ սրբապիղծին բաժինը այս

աշխարհքին վրայ՝ մահը միայն կրնար ըլլալ : Անկէ անկին՝ դաշոյնի մը արծաթ չողքը փայլակի շրջան մը դարձաց մթութեան մէջ , եւ ակնթարթ մը չէր անցած՝ երբ հօտալին մարմինը , որսէն զարնուած , սարն ի վար կը զահաւիժէր խուլ , անորոշ սպմուկով մը որուն մօտի լեռները տխուր արձաղանդը կը հրահէին :

Քիչ ետքը , Մարգսենց Յակոբ դէպ ի վեր կը խթէր ձին : Արիւնը մօքքած էր անպատուութիւնը , ու ծերունի տանտէրը կրնար տալի պէս ճակատաբար քարձր պահել նա , մայնքին առջեւ :

* * *

Երեք ամիս անցած էր անկէ ի վեր , եւ այդ երեք ամիսները Մարիայի համար առապանքի օրեր միայն ունեցած էին : Սերգայի սպանումէն վերջ խիղճը սկսած էր տանջիլ զինքը : Առաջին օրերը , վրէժխնդրութեան ուրախութենէն արդէն , բան մը չէր զգացած թէ եւ , բայց շատ չանցած սաղմոսները ծայր տուած էր անկարեկիր թափով մը՝ որուն չէր կրցած բնաւ դիմադրել : Այդ առաջին օրերուն , ջլաքարի թափառիկ կեանք մը անցուցած էր գիւղին մէջ , չարունակ մէկ տեղէն միւսը , անհանդարտ ու խռովուն Ուր որ նստելու ըլլար , իրեն անանկ կոզոր թէ չորս կողմէն ամէն բան , ծառերը , ծաղիկները , քարերը , թռչունները , տուներն ու հողը « ոճրապօրծ » կը պոռային ականջներուն տակ : Անմեղի մը սպանման պատճառ եղած էր վերջապէս , եւ կը զգար թէ զուր տեղը կատարուած այդ ոճիրը մշտնջենապէս պիտի ծանրանար իր խղճին վրայ : Ի՞նչ յանցանք ունէր խեղճ հօտալը , աղայ մը՝ որուն նկատմամբ զգացած սէրը տակաւին չէր չիջած , եւ որ իր կարգին տարրեր տանջանք մը դրսեւան էր իրեն համար : Այդ սիրոյն ամէն մէկ կայծը որ կ'արթննար կուրծքին տակ , կարծես բողբոջի ձայն մըն ալ ինք կը բարձրացնէր իրեն դէմ : Յետոյ վատ բան մը կար այդ ուրին մէջ : Եթէ երբեք , սարին կատարը մզած կուրծքին մէջ ինք իր ձեռքով սպաննած ըլլար Սերգօն , այնչափ չալտի տանջուէր իր հողին , բայց ինք ուրիշ մը , իր հայրն իսկ գործիքը

դարձուցած էր անանուն լրէժմանդրութեան մը որ բոլորովին տարբեր կերպով պէտք է մտքաւորէր : Վրէժմանդրութեան այդ կերպը ետքէն միտքը կ'իյնար : Եթէ երբեք ոճիրը գործուած չըլլար , ինք սէր պիտի տար ու թիւ աւելի խեղճուէկ հօտաղի մը , հոգ չէ թէ կեղծ սէր մը՝ որ սակայն նախանձառ պիտի դարձնէր Սերգօն , ու ծանր տանջանք մը պիտի ըլլար անոր համար : Բայց ոճիրը գործուած էր արդէն , եւ ա'լ քան մը չէր կրնար զայն դարմանել :

Այդ առաջին օրերուն մէջ , առառու մը վերապէս չէր զիմացած , ու սարին ստորոտը երթալով թաղած էր Սերգօնի դիակը՝ զօր ագաւաններ արդէն իսկ բզքտած էին մեծ մասամբ : Ասոր վրայ քիչ մը հանդարտած էր : Զայնքը կարծես ա'լ չէին հնչեր իր շուրջը , եւ ոչ ոք «սփռադո՛րծ» կը պոռար ականջն ի վեր : Խիղճը սակայն միշտ կապարի ծանրութեամբ մը կը ճնշէր զինքը : Ի՞նչ կ'ուզէր այդ առայգ ու կորսովի հօտաղէն՝ որ առանց բաղկին դէմ արանջալու՝ ստրուկի կեանք մը կ'ապէր իրենց տան մէջ , եւ որուն ոչ ոք ո'րէ մէկ չար արարքը կրնար յիշել : Բարի , անձնուէր տղայ մըն էր , քաջ տղայ մը միեւնոյն տուն , եւ սիրուած բովանդակ գիւղին կողմէ : Հիմայ սակայն , խեղճին յիշատակն իսկ կ'անարգէին այդ մարդիկը՝ որոնք առանց տարակոյսի հաւատացած էին Մարիայի պատմութեան . ո'չ ոք վայրկեանի մը կարեկցու թիւնը զգացած էր հօտաղին համար . ան պատուիչ մըն էր , մեղանշած էր իր պարտականութեան դէմ , ոտքի տակ առած էր այն նուիրական կապը որ մշանջների բաժախում մը պէտք է դնէր իր եւ իր տէրերուն վրէժ . եւ աղջկան մը անպատուիչին , սքրապիծի մը պատիժը մահը միայն կրնար ըլլալ :

Սերգօնի դիակը թաղուէն վերջ՝ Մարիա գրեթէ ամէն օր պուտ մը ազօթք ընկուէր թրաքար անոր պարզուէկ հողակոյտին վրայ՝ զոր ամբողջովին ծաղիկներով ծածկած էր , եւ զոր գաղտնի կը պահէր ամէնէն : Գիւղին մէջ ոչ ոք զիտէր այդ պարագան , եւ աղջիկը ա'յն աստիճան զգուշութեամբ կը մօտենար հողակոյտին որ մէկը չպիտի կրնար իր գաղտնիքը երեւան հանել : Օր մը , մինչդեռ

ազօթքի նստած էր հօն , սարին կատարը թաղած բուռի մը կրկնօրը հնչեց յանկարծ : Մարիա իր խռովքին մէջ այնպէս կարծեց թէ նոյն ինքն Սերգօն է ձայնողը , ու սարսափի աղաղակ մը արձակելով գիւղ փախաւ : Անկէ ետք տանջանքը կրկին սկսաւ , եւ ա'լ աւելի կատաղի կերպով մը : Պզտիկ չչուէկ մը ելլելուն պէս անանկ կը կարծէր թէ Սերգօնի ձայնն է որ «ոճրագո՛րծ , ոճրագո՛րծ» կը պոռայ իրեն : Ամբողջ երկու ամիս այդ համոզումը չմարեցաւ . ընդհակառակը օր օրի աւելի կը շեշտուէր . ոչ քուն ունէր գիշերը , ոչ ալ ցերեկը հանդիսաւ : Սերգօնի ձայնը չէր բաժնուեր իրմէ եւ կեանքը ա'յն աստիճան տաժանի չարձած էր իրեն , որ որոշեց ամէն բան հօրը խոստովանիլ : Խոստովանութիւնը միշտ սփոփարար է հոգիին համար , ու պատիժէն առաջ միակ բանն է որ կրնայ խիղճը թեթեւցնել :

Այդ որոշումը տալէ վերջ Մարիա բնաւ չվարանցաւ .

— Հայր , հայր , ըսաւ իրիկուն մը՝ մինչդեռ Սարգսենց Յակոբ իր գամբռերը կը շոյէր տանը առաջը , հայր , աղջիկդ յանցաւոր է : Ծերունին անհանդիստ նայուածք մը դաւմեց աղջկանը դէմքին :

— Այո՛ , հայր , աղջիկդ յանցաւոր է . . . :

— Մարիա , ի՞նչ ունիս , հարցուց Սարգսենց Յակոբ՝ ահաւոր յայտնութեան մը սպասելով :

— Հայր , Սերգօն յանցաւոր չէր . . . դուն անմեղ մը սպաննեցիր . . . :

Ու պատմեց իրողութիւնը , առանց ո'րէ մէկ մանրամասնութիւն ծածկելու :

Ծերունիին դէմքը մթադնեցաւ : Հարուածը սակայն ա'յն աստիճան անսպասելի էր որ նախ չկրցաւ չափել Մարիայի խոստովանութեան բովանդակ ծանրակշիւ հանգամանքը : Բաւաւ կան ետքը միայն գիտակցութիւնը սկսաւ արթննալ կամաց կամաց , եւ աչքերը արդէն իսկ անարկու արատայայտութեամբ մը շլմորած էին՝ երբ ամէն բան հասկցաւ վերջապէս : Պահ մը սեղմեց բռունցքները եւ աղջկանը վրայ խոյացաւ , բայց հազիւ քայլ մը առած՝ գոցեց աչքերը եւ սկսաւ ընկրկիլ : Թեւերը իրանն ի վար ինկան անկենդան : Ծերունին արիւնի արաաներ տեսնել կարծած էր ձեռու ընկերուն վրայ , արաաներ՝ որոնք սարին

կատարը, զիշերուան մթութեան մէջ գործուած այդ անիրաւ ոճիրը պատկերացուցած էին աշուրներուն առջեւ ։ Յետոյ, այդ առաջին խաբկանքին ցրուելէն վերջ, ծանր ծանր աղջկանը մօտեցաւ կրկին, եւ հանդարտ ձայնով մը ըսաւ ։

— Մարիա՛, այդ ոճիրը քու արիւնդ միայն կրնայ քաւել . . .

Մարիա չլսեց հօրը ձայնը ։ Հիւսիսէն կատաղի հով մը փչել սկսած էր, եւ աղջիկը, հակառակ ականջները դրոշմելու, այնպէս կը կարծէր թէ Սերգոյի աւաջն է՝ որ «ոճրագործ», «ոճրագործ», կը պոռայ երեսն ի վեր ։

Երբոր հովը դադրեցաւ, հայրը տուն մտած էր արդէն ։

* * *

Հրաշալի արշայոյսով մը արթնցած էր յաջորդ օրը ։ Երկինքը ծիրանի պատմուճան մը առած էր վրան, ու դաշտը իր ցողաթուրմ մարգերուն առուգութեամբ կը փողփողէր անոր տակ ։ Սարը միայն այդ ընդհանուր կանանչին մէջ լերկ գլուխ մը ցցած էր գէպի երկինք, մնայլ ու խրոխտ գիրքով մը որ իր բգեշխի պատկառազու հովանին կը սփռէր շուրջի տարածութեան վրայ ։ Ասդին անդին քանի մը սարեակներ կը ճռուողէին քարերու կատարէն, ու սարին ցից կողերուն վրայէն ալ եկքանիկներու ցրուուն խումբ մը կը ձայնակցէր անոնց՝ խուժուժ երգով մը ։

Առտուան այդ ժամուն Սարգսնեց Յակոբ իր աղջիկը սարին գլուխը առաջնորդած էր, եւ զայն պառկեցուցած էր ճիշդ այն քարին վրայ՝ ուր Սերգո իր մահը գտած էր ։ Մարիա չէր ընդդիմացած ։ Սարը՝ քանի մը ամիս առաջ տեղի ունեցած առամին վերջուշումը տուած էր իրեն, ու գաղաթը հասնելուն պէս կորսնցուցած էր ինքզինքը ։ Ամէն բան ոճիրը կը յիշեցնէր հոն ։ Ոճիր մը՝ որուն ամբողջ ծանրութիւնը իր վրայ պիտի մնար միշտ ։ Հօղը կարծես տակաւին կը կրէր հեռքերը այն կատաղի կռուին՝ զոր ինք հող մղած էր Սերգոյի հետ ։ Չէր հասկցած թէ հայրը ինչո՞ւ զինքը հող կը բերէր այդպէս կանուխ, եւ իր ինքնամոռացման մէջ կուրօրէն հնա-

զանդած էր անոր ու պառկած այդ ժայռին վրայ ուր Սերգոյի եւ իր չրթունքները անգամ մը իրարու խառնուած էին կռուէն զի առաջ ։ Այդ ժայռը ապաշաւի բագին մը գործած էր հիմայ, եւ աղջիկը չէր զգար թէ ինքն իսկ պիտի ըլլայ պատուճակը այն գոհին՝ զոր հայրը կը մատուցանէր ոճրին քաւութեան համար ։

— Մարիա, դուռաց յանկարծ ծերունին ։

Աղջիկը աշուրները հօրը դարձուց եւ տկար կանչ մը արձակելով նուաղեցաւ ։ Մերկ դռնին մը սեռած էր հօրը ձեռքը, դառն զնորուն վրայ Սերգոյի արիւնէն պղտիկ նեղք մը կը մնար դեռ՝ կարծես իբր արձանագրութիւն մը կատարուած ոճրին ։

— Մարիա, դուռաց ծերունին երկրորդ անգամ մը, Սերգոյի արիւնը քու արիւնով միայն կրնայ մաքրուիլ ։

Յետոյ, դանդաղօրէն դաշտը խնարինցուց աղջկանը կուրծքին վրայ, փնտնեց սիրտը՝ որուն դարկը դադրած էր արդէն ու ծանր շարժումով մը զայն միսն ի վար միեց մինչեւ երախակալը ։

Առտուան սիւգ մը տխուր երգ մը կը սուլէր սարին վրայէն ։ Ծերունին քաշեց դռնին, եւ ոտքերուն տակ ծիւ տուած թրքթրնշուկներու խուրձով մը սրբեց զայն ։ Աղջկանը արիւնը մաքրած էր այն հետքը՝ որ Սերգոյի արիւնէն կը մնար գէնքին վրայ ։

Զոհասուութիւնը կատարուած էր ։ Սարգսնեց Յակոբ յամրաբար ձեռք առաւ դիւղին ճամբան, եւ երբ տուն հասաւ, զգաց որ խիղճը վերագտած է իր առջի հանդարտութիւնը ։

ՄԷԼԻՍԷՏ

Խառն ժողովը գումարուեցաւ երեքաթիթ առտու Ղալաթիոյ խորհրդարանին մէջ եւ զբաղեցաւ յարաբերական խնդիրներով ։ Գրեթէ ժողովէն ներկայ էին երկու ասենապետ Սերբազանները, ինչպէս նաեւ Տ. Յըլէէ Խալիփ Դուրեան — որ մայրաքաղաք կը գտնուի Դպրեւանքին վերաբերող գործերու պատճառով — եւ Սեթեան ու Խանճեան քահանայները, իսկ Քաղ. Ժողովէն՝ եօթը անդամ ։

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԱՍԵՄ. ՕՀԱՆ ԷՖԷՆՏԻ ՊՍՂՏՍՑԻՆՆԵՐ

Բ. Դրան Հպատակութեանց Դիւանի նախորդ Տնօրէն՝ հանգուցեալ Օհան էֆ. Պաղատաւանի յուղարկաւորութիւնը կատարուեցաւ չարաթ առաւօտ, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, յուղարկաւորներու խումբն եւ ընտրեալ բազմութեան մը ներկայութեամբ, որուն մէջ կը նշմարէին պետական անձնաւորութիւններ, առեւտրական ու սեղանաւորական դասի ներկայացուցիչներ, Պատրիարքաբնի Ժողովոց անդամներ, Բողոքականաց ազգայեալ, բժիշկներ, փաստաբաններ, լրագրապետներ եւայլն։ Դադարը, տաճարին մէջտեղ մահաբեմի մը վրայ դրուած՝ ծածկուած էր պսակներով զորս նուիրած էին հանգուցելոյն այրին՝ Տիկին Վերգինէ Պաղատաւան, եղբայրները՝ Գարեգին եւ Արամ էֆիք Պաղատաւան, Լէոն պէյ Ներսէսեան եւ ուրիշ ազգականներ ու բարեկամներ։ Եւ պիտոյնական դասէն ներկայ էին Բերայի քարոզիչ Տ. Հմայեակ Սրբազան, ինչպէս նաեւ Տ. Գէորգ Երէցեան եւ Տ. Եղիշէ Դուրեան Սրբաղանները, բազմութիւ վարդապետներէ ու քահանաներէ չըջապատուած։ Տ. Հմայեակ եպիսկոպոս խօսեցաւ դամբանականք՝ իր հակիրճութեանը ու պարզութեանը մէջ դեղեցիկ։ Մահուան վրայ կրօնային տեսութենէ մը ետքը, նկարագրեց կեանքը ու համատ սկզբնաւորութիւնը հանգուցեալին որ, քահանայի զաւակ, Սկիւտարի Ճեմարանին մէջ իր նախակրթութիւնը ստանալէ ետքը, ինքնօգնութեամբ ու աշխատասիրութեամբ դարգացաւ ու յառաջգնաց, եւ պետական ծառայութեան մէջ վարեց՝ Պէրլինի օսմ. դեսպանատան խորհրդականի եւ յետոյ՝ Խորհրդիչի հպատակութեանց ղեկանին պետի կարեւոր պաշտօնները, արժանանալով աստիճաններու եւ պատուանշաններու։ Գերբարձր յիշեց նաեւ անոր մատուցած ծառայութիւնները մեր հանրային շրջանակին մէջ՝ պահ մը իբրեւ ատենապետ Ուսումն. նորոգչին, ու միանգամայն իբրեւ անդամ

Բերայի Խնամակալութեան, — պաշտօն որու միջոցին մասնաւոր հոգածութիւն ունէր աղջկանց Արհեստանոցին վրայ։ Անցնելով Օհան էֆէնտի կեանքի վերջին տարիներուն, ուր անողոք հիւանդութիւն մը անկարող դարձուցած էր զինքը աշխատելու, Հմայեակ Սրբազան ի վեր հանեց օրինակելի անձնուիրութիւնը ու դուրգութեանք անոր ամուսնոյն՝ Տիկին Վերգինէի (ծն. Ներսէսեան) որ եօթըութը տարի շարունակ խնամեց ու սփոփեց զայն, մեղմացնելով անոր ցաւագին վիճակը կնոջական քաղցրութեամբ։ Գարեգիչ Սրբազանը յիշեց նաեւ հանգուցելոյն երկու եղբայրները՝ տպարանապետ Գարեգին էֆն. եւ Արամ էֆն. (օսմ. հիւպատոս Նարօլի) ու անոց կաթովին սէրը իրենց եղբօրը վրայ։

Գամբանակալին եւ արարողութեանց աւարտումէն ետքը, հանդիսաւոր թափօրով տաճարէն դուրս հանուեցաւ դադարը որուն առջեւէն Խորհրդիչի բարապաններ թաւեայ բարձիկներու վրայ կը տանէին Օհան էֆի օսմ. եւ օտար պատուանշանները։

Յուղարկաւորները եկեղեցիի բակին մէջ իրենց ցաւակցութիւնը յայտնեցին հանգուցելոյն վշտահար եղբօրը՝ Գարեգին էֆ. Պաղատաւանի, ինչպէս նաեւ Լէոն պէյ Ներսէսեանի եւ Գառնիկ էֆ. Աստուածատուրի ու Օննիկ էֆ. Ջրածնանի, որոնք սգակիր կեցած էին եւ հետեւեցան դադարին որ քառածի մեռելակառքով մը փոխադրուեցաւ Շիշլիի գերեզմանատունը։ Յուղարկաւորներուն մէկ մասը, կառքերով, մինչեւ գերեզմանատուն գացին՝ ներկայ գտնուելու թաղմանը։

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ճեթիսի Շարգիյե եւ Սուրհանդակ օրաթերթերու Տէր եւ Տնօրէն Տիգրան էֆ. Ժիվէլեկեանի քոյրը՝ Տիկին Սրբուհի Համամեան (հանգուցեալ զինուորական բժիշկ դեր-գիդապետ Տօքթ. Ժիվան պէյ Համամեանի այրին) կարճատեւ հիւանդութենէ մը վերջ իր մահ կանաչուն կնքեց անցեալ ուրբաթ օր եւ յուղարկաւորութիւնը հանդիսաւորապէս կատարուեցաւ չարաթ առաւօտ Սամաթիոյ Անարատ Յղութիւն եկեղեցիին մէջ, բազմաթիւ եկեղեցականներու եւ աշխարհականներու

բու ներկայութեամբ որոնց մէջ կը նշմարուէին ծանօթ անձնաւորութիւններ :

Հանգուցեալ Տիկինը՝ իրրեւ ամուսին եւ իրրեւ մայր՝ ազնիւ ձիրքերով օժտուած էր եւ զինքը մօտէն ճանչցողները կը դրուասեն անոր առաքինի , պարզասէր ու բարի բնաւորութիւնը , որով՝ իր ամուսնոյն մահէն ետքը՝ իր զաւկներուն ու թոռներուն նուիրուած անուիրութեանը մէջ կը գտնէր իր սիրովանքը :

Մեր խօրին ցաւակցութիւնները կը յայտնենք մեր պաշտօնակցին՝ Տիրքան էֆ. ձիվէլէկեանի , ինչպէս նաեւ եղբորը՝ Յովհաննէս էֆ.ի ու հանգուցեալ Տիկինոջ զաւկներուն , իրենց կրած այս գաղն կորուստին առթիւ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ(*)

Ե Ի

ԶԱՆԱԶԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՈՒ ՈՃԵՐ

—>—<—

Ա..

Աղբը քանի խառնեա կնքա՛ն հոտ կելնէ :

Աղբին մօխիւր ցանեց :

Աղբիւր գացող , ծարաւ դարձող : (Տես նաեւ՝ Զուրը գնաց . . .) :

Աղբիւրը զղաղձ չ'ուզէ , կ'երթայ կուգայ սկը կը բուսնի : (Զի սիրուած մեկու մը կ'ըստի) :

Աղբիւրը տանի , ծարաւ կը բերէ (վարպետորդի մէկն է) :

Աղբիւրիդ նայէ , Զուրը անոր համեմատ խառնէ :

Աղբիւրները չի չորցած՝ Զուրին դըրնեքը չի գիացուիր :

Աղբդ չոր , ապրակդ նոր : (Անհոգ ու անվիշտ ես) :

Աղէկ արմանքը լերան ետեւ . գէշ արմանքը դրան ետեւ :

Աղէկ է , աղէկ է ըսելու ըլլան , զիժը կըսէ , ի՞նչ աղէկ է , աղիքը ո՛րո ո՛րո ըլլայ :

(*) Շարունակութիւն քիւ 29 Մասիսէն :

Աղէկ կաղմած դիրք , մէջը բան չի կայ :

Աղէկ կին , չունի գին :

Աղէկ ձին՝ հարանը կը հային :

Աղէկ մանած ըլլայիր , քս մօր պատէն կախած կ'ըլլայիր :

Աղէկ մարդը՝ խօսքին վրայ կուգայ :

Աղէկութեան փոխարէն ըլլար նե , սեւ եղին գանակ չէր ըլլար :

Աղէկութիւն մը ըրէ՛՝ տար ծովը նեաէ , ան կուգայ քեզ կը գտնէ : (Տես՝ խեր ըրէ . . . Տես նաեւ՝ Բարիք ըրէ . . .) :

Աղէկ վարդը իր հողին վրայ կը բուսնի :

Աղէկ օրդ գէշ օրի մի՛ տար : Կաւ՝ Աղէկ օրդ գէշի մի՛ տար :

Աղէկ օրը վաղուընկուց , աղէկ ողան պըդ աիկուց :

Աղէկ օրիդ՝ երեսիդ խնդացող շատ կ'ըլլայ , Կաւ՝ Աղէկ օրը բարեկամ շատ կը դըռնուի : (Տես նաեւ Բարեկամը . . .) :

Աղէկ օրն առաւուընէ , աղէկ տարին գարնանէ , Աղէկդիքս բերանս եկաւ :

Աղը եկաւ , մատաղը հատաւ : (Ունենալ պիտանի քան մը ուր աշխուս պիտէ) :

Աղին աղի կըսեն , անլին անլի :

Այն ու հացը ծուկին վրայ է :

Աղուէսը քաղարուներ ի՞նչ բան ունի :

Աղուէսը՝ իր աղուէս ըլլալը մինչեւ հասկնէ փութը շուկան կ'ելնէ :

Աղուէսը մեր մարագը ճուտ է հաներ . — մեր քաղուին հեղութենից է :

Աղուէսը փուշին վրայ մէյ մը կը նստի : Աղուէսին ասացին՝ հաւի ֆեպպայ կ'ուտն .

— ասաց՝ մարդուն խնդուքը կը բերէր . Աղուէսին դուռը խաղողին չէ հասեր , ասոր է՝ խակ է : (Տես նաեւ՝ կատուին . . .) :

Աղուէսին խօսքին վկայ են ուղեր . — պոչն է ցուցիր , Կաւ՝ Աղուէսին վկան իր պոչն է : Կաւ՝ Աղուէսը՝ իր պոչը վրայ կը բռնէ :

Աղուէսին հարցուցին ֆի՛ քանի տեսակ պօս գիտես . — ասաց՝ շունին ասջուէն խաղրեսչու երեսուներկու պօս գիտեմ . —

հարցուցին ո՞րն է լաւը . — ասաց , լաւն ան է որ , ո՛չ ես շունը տեսնեմ , եւ ո՛չ շունը խնծի :

Աղուէսին փախուսաւ մինչեւ ֆիւրֆի քու-

Բանն է : (Տես նաեւ՝ Կատուին . . .) :
 Ան ու հացը ծուռնկին վրայ է :
 Ան ու հաց ենք կերեր :
 Աղջիկ զաւակ , ուրիշի տան ճրայ : (Տես նաեւ՝
 Զաւակդ . . .) :
 Աղջիկը էրիկ ուղէ տան կճուճները կը կոտ-
 րէ , ազան աղջիկ ուղէ՝ դուրսէն կը
 գնայ : (Թուրք . Գըզ պէտխուրէ՝ էտ-
 րէմ դուրթուրամ , օղլան պէտխուրէ՝
 կիթաէմ դուրթուրամ տէր) :
 Աղջիկը միշտ մօրը կողմը կը քաշէ :
 Աղջիկը՝ մօրը վրայ , մանչը՝ հօրը վրայ աւ-
 սածը կընէ :
 Աղջիկը՝ օրնին տակ գովելու է :
 Աղջիկ ունեցող մօր՝ մէկ ձեռքը ծոցը կ'ըլլայ :
 Աղջիկս քեզ կ'աւտեմ , հարսս դո՛ւն իմացիր :
 Կամ՝ Աղջիկ քեզ կըսեմ , հարսնուկ դու
 լիք : (Տես՝ Պատ . . . : Տես նաեւ՝
 Կուժ . . .) :
 Աղջիկ ազան իր հաշին թողնէս նէ , ես՝ տա-
 վորձին կ'աւտէ , ես՝ գործունէին :
 Աղջկայ տունը դասի ու գործունայ , աղային
 տունը ոչինչ չի կայ :
 Աղջկան աղէկը հարսնութեան պէրը կ'ըլլայ :
 Աղայի ես՝ քեզի ես , ուսկից որ է պէ-
 շի ես :
 Աղատ մարդը , Զատիկին ալ աղտոտ կ'ըլլի :
 Աղ ցանեմ որ չի հոտիս :
 Աղքատ առուտուր : (Միշտ դասով գրադող-
 ներուն համար կըսուի) :
 Աղքատաց պաշտպանն է Աստուած : Կամ՝
 Աղքատին տէրը Աստուած է :
 Աղքատը ամէն տեղ կը պառկի :
 Աղքատի կովը յգի թո՛ղ ըլլայ :
 Աղքատին երեսը աշող չըլլար : Կամ՝ Աղքա-
 տին էրիս աշող չի կայ :
 Աղքատին զաւակ ըլլալուդ , հարուստին ծա-
 ւան եղիր :
 Աղքատին հաշին՝ աղքատը կը հասկնայ :
 Աղքատին հայն ուտողը չի կշտանար :
 Աղքատին ունեցածը գլխուն վերեւ պէտք է
 ըլլայ :
 Աղքատին սիրտը կայ , ձեռքը չի կայ :
 Աղքատին տեղիկը չի հասնիր : Կամ՝ Աղ-
 քատ , երիցու քարազը չանցնիր : (Եղիճ
 մարդուն խօսքին մօտիկ ընող չըլլար) :

Աղքատ հպարտ : Կամ՝ Հեւ աղքատ հեւ
 փօսուչ :
 Աղքատն աղքատ չէ , ազանն է աղքատ :
 (Տես նաեւ՝ Ազանն . . .) :
 Աղքատն ունի՞ հաց ու պանիր , գիշերը քունը
 չի տանիր : (Չտես է) : Տես նաեւ՝ Չին-
 կեանէին . . . :
 Աղքատութիւնը ամօթ չէ՛ , ծուլութիւնը ա-
 մօթ է :
 Աղքատութիւնը երկաթէ շապիկ է :
 Աղքատութիւնն ալ՝ մէկ օրուան համար պէտք
 եղաւ :
 (Շարունակելի)

Կարգադրեց
 ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿ. ՊԱԼԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ. — Քէօր = կոյր , Ծի = ինձ , Դաղձ
 = վայրի նանէ , Գիթ = խենդ , ճուտ = ձագ , Պօս
 = խաղ , օյուն , տուպարս :

ՏԵՐՏԵՐԻՆ ՄԱՅԸ

Տէրաէրը հիւանդ էր նախընթաց ապրիլ
 20ի կիրակիէն ի վեր :
 Մահամերձ , կետաւ մը հիւանդներու նման՝
 ինքն ալ նախազգուշ իր վաղանցիկ ժամերուն
 վրայ , չտապած ու ստիպած էր զիս կանչել :
 Ու կ'ըսէն , չա՛տ անհամբեր կը հարցնէր՝ ե-
 կա՞ւ , եկա՞ւ . . . :
 Հայրական աննկարագրելի սէրը , անրա-
 ցաւելի կարօտը՝ մահուան խօլական հրաւե-
 րին ներքեւ՝ վշտազնած ու ծերունցած կուրծ-
 քէն պոռթկալու աստիճան՝ հաղթարարաւ-
 կուած էին : Ինչե՛ր կ'անցնէին կը դառնային
 հալուկ , մաշուկ՝ այլ գուժով , գորովով ,
 կարօտով երեսած էգ սերսուք սրտին մէջ ,
 որ դեռ սիրոյ ապրշու՜մալէկածիկ ծով մըն էր ,
 հանդ մը պրտը՝ երկնուց ժանդաւիի նման :
 Վաղուց չէր անսած զիս , անհուն կարօտ
 ունէր աննկիւք , Կարկառուն աջին մատու-
 ցած համարայրիս հետ մէկէն դիրկընդխառնուե-
 ցան իր աչիկներէն կլկացող դուլւլ ար-
 ցունքը եւ դալկացած երեսին վրայ կամկար
 վազած ժպիտները . . . եւ ահա հանդ մ'առաւ
 արուշ-բարուշ , է՛լ կը թեթեւային կարծես

իր արեւառ ցաւերը : Ինձի կ'աչքէր , երթիքը կ'աչքէր՝ տեւեւելու համար թէ հոգէաւը եկած է : Բովանդակ թափով կըղձար որ քիչ մ'էլ երկարին կարճնցած ու կծկուած ժամերը , կուշտ մը վայելելու համար իր սիրելիներ , բարեկամներ եւ հօտն հոգեւոր : Կարօտով չմնալու համար 40 տարուայ իր ասպնջական ժամէն , սրբանոցէն , առն ու տեղէն , գեղի հող ու ջրէն , ծառ ու ձգէն . . .

Գարուն գարնանոցով նոր էր եկեր . ահա մայիսը իր աննման ծաղկունքներով , կանանչներով՝ վարդայիռ . զուարթ-պարարտ թաւառաններով երանգ-երանգ պուրակներու , որոնց անթառամ թփերուն մէջ թառած էին էրուն-թռչուն . պղպուլը կ'երգէր ձէնիկն անըսպառ , սարիկը կը ճուռդէր , արտոյար կը թրթփար ու կռուկներու խորուն-խրնկոցին հետ՝ ճուրրը կը ճոար ու ծաղրիկ-հաւքը կը սուրար սէր ու սրսուրով . . . Ահա իր սիրունիկ շինական արաղիլը , որ բոյնը դրեր էր օտային տանիս , որու ներքեւը ճնճուղին ճիւղ ու ճիւղ նուագները կը լսուէր՝ գոթան էր նըստեր ձագեր հանելու , ձագեր թոցներու . . . Ինքն էլ ունէր թոցնելիք ձագեր՝ — իր զաւկները : — Հապա իր փայփայած նորածին հորթիկները , մատղաշ ու կայտառ ուն ու գառը , պաղունց ու բղբուն վառիկները , որոնք կը թափառէին կանչոտ փողանները . . . Քիչ մնաց , որ հասնէր ցանկալին ու ծաղկալին Համարածուի՝ գարնանային , շուշանափետուր տօնը եւ տօները նուիրական սարերուն , վարդնոց ծառաստաններուն , էնց մը վաղեմի սրբերուն , Սըբ Կարապետին , Սահակ Հայրապետին , կամար ժամերուն , նախշուն ու խաչանիշ խորաններուն . . . Այս ամէնքը՝ երամ-երամ իր աչքի առջեւն էին , իսկի չէին փախած յուշաց . Ինչպէս բաժնուիլ ա՛յսքան սուրբերէ ու սիրելիներէ . Ինչպէս . — Հոգիս յօժար է , բայց մարմինս տկար :

* * *

Տ. Կարապետ քահանայ Յովհաննէսեան՝ ծնեալ 1827 ի խէյպեան գիւղ Մշոյ , ուր մանկութեան ասին հասարակ ընթերցանութեան վարժուելէ ետքը՝ չափահասութեան կարճ միջոց մը (1850 կամ 52ին) զայն մշակած էր

Ս. Կարապետի վանքը՝ սովորելով նահապետական գիր-կարդմունք : Որմէ վերջ՝ ծննդավայր գեղին գրագիր ու ժամին դպիր եղեր էր : 1865ին քահանայ կը ձեռնադրուի տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյն՝ Ս. Յովհաննէս վանքին մէջ՝ Ս. Կարապետի նախորդ վանահայր խէյպեանցի բարեյիշատակ Տ. Զաքարիա եպիսկոպոսէն : Իր հոգեւոր պաշտօնին հետ , զոր անխափան ու անբախիւր շարունակեց , վերած էր վանքերու նուիրակութիւններ , ուրիշ հոգեւոր ծառայութիւններ : Ի մէջ այլոց , վայելած էր մասնաւորապէս համակրանքը Սրբաւնձատեանց Տ. Գարեգին Սրբազանին : Քահանայագործած էր նաեւ ուրիշ եկեղեցիներ , եւ յԱլաշկերտ . այս պատեհութեամբ ուխտի դացեր էր նաեւ Ս. Էջմիածին :

Զօր-գիշեր պատրաստ էր հոգեւոր մատակարարութեանց եւ ժամերգութեանց , զորս կը կատարէր երկիւղած ու ջերմեռանդ զգացումներով : Անխափ կը հասնէր ցաւալորներուն՝ հիւանդութեան ժուռ , հոգեվարքի , թաղման ժուռ՝ անխոյս խրճիթներու մէջ մրմնջելով՝ մխրթարութեան օրհնութեան աւետարանը , հանգստեան հոգւոցը , եւայլն : Իր բեւ միամիտ հաւատացեալ՝ Աստուծոյ թողած էր իր հոգեքը՝ ինչ ընկեցէք զհոգս ձեր : Իր գոհ սիրտը արդէն բան մը չէր օգտակար քատիկ հօտէն . քահանայութեան աննշան իրաւունքով (հասոյթ) բան մը չթառանգեց , հետեւաբար նիւթական ժառանգութիւն մըն ալ չթողուց իր բաղմանդաւ՝ ընտանիքին : Արդէն իր աչքն աւատ եւ ձեռքն ողորմել էր : Կը մխրթարուէր երբ ու եւ կերպով իր պարտքը կատարէր եւ օգտակար ըլլար իր հօտին ու եկեղեցիին : Շատ կը սիրէր առճապին մէջ ու եկեղեցիներ : Շատ կը սիրէր առճապին մէջ որչափ սիրտ հաւացուցեր էր մեծատան մը քով : 8-10 տարիներէ հետէ՝ իր ձերութեան օրերուն՝ մինակ կը թեմէր խէյպեան եւ Տաճիկեղերու ժողովուրդը : Նոյն իսկ հիւանդ , պաշտամունքէ ետ չէր մնար : Մեծ պահքին անցուցած միաժուռ ծոմը , հսկումները , երկար ժամասացութիւնները՝ վերջապէս յոգ

ննջուցին ու հիւանդացոցին դինքը մահացու
կերպով :

* * *

Երբ դեղ հասաւ մեռելական տրտմաթա-
լիճ տուրուտապը արդէն տրորած ու տար-
աբաժնած էր դինքը : Շարականներ շատ կը
սիրէր . երգել տուաւ «Այսօր ժողովեալ սրբոց»
լարականը , իր դողդոջուն ձայնով ձայնակցե-
լով — « Ի՞նչ աղէկ բրիւր որ իկար , ասաց , սիրտս
հովեցուցիր » : Մէկ երկու օր քիչ մը հանգիստ
կերեւէր : Երբ բժիշկ բերել առաջարկեցինք ,
մերկեց . — « Ի՞նչ ընեմ բժիշկ , չէ՞ որ այս
առտ աստուրէն պիտի բաժնուիր » : Ամէն
բանին մէջ՝ Աստուծոյ կամքը օրհնեալ թող
ըլլայ , սակայն կեանքն ի՞նչ է զաւակս : Հա-
զար մո՛յ յաչս Տեառն իբրեւ զպահ մի գիշե-
րոյ է : Աղօթեցէք որ Աստուած իր երա-
նական լուսոյն արժանացնէ : Ամենուն պա-
ստօք դացիք են , քու պապդ էլ պիտի եր-
թայ — Հոգին դառնայ առ այն որ ետն դնայ » :
Իր հիւանդութեան ժամերուն յուզմամբ հե-
տեւեցան իրենները , դրացիները , գեղացի-
ներ ու բոլոր բարեկամներ , որոնք ամէն ժամ
անպակտ էին , կուգային աջը առնելու
որհուժիւն ու հալալութիւն առնելու իրենց
աշխարհին , որ դամէնքը սիրած ու սիրուած
էր , եւ ինչպէս կըսէին հաւորեալքի սիրտ իրմէ
կը թողուցած : Եթէ դինքը վշտացնողներ
եղած էին , ինքը ոչ զոք վշտացուցած էր ,
կարծեմ : Մինչեւ վերջին շունչ պահեց իր
զբառք ու ջըն ու Փամբ : Չնայելով իր ծանա-
րիկ ցաւերուն՝ բոլոր ճիւղը կը թափէր այցե-
լուներուն Աստուծոյ բարութիւնը հայցելու ,
յանէանէ օրհնելով , կտակելով մահաւանդ
որ Աստուած սիրեն , ժամ , պատարագ սիրեն ,
իրար սիրալ չկոտորեն . մարդ մահկանա-
ցուն մէկ մէկ աղէկութիւն մինակ կը մնայ ,
թո՛ղ անկէ անկէ անդին խաչերով քաղաքը
(գիւղամաս) . . . Ահա՛ ես ալ իմ արեւը ձեզի
եղ թողում : Փղձկած էր , էլ չէր կրնար լու-
սիկ , ուղեց որ քիչ մը քնանայ , եթէ հնար
էր քնանալ ա՛յնքան դառնակսկիծ ցաւերու
մէջ :

Հիւանդութեան 13րդ օրը Արածանի օրհ-
նակ ու պատր Զուրը ուղեց : Այս Զուրը
հոգեբան է գիւղացիներուն , որովհետեւ

Պինկէօլէն ու Նպատէն կուգայ : Ըղձանքով
խմեց ու լուացուեցաւ : Նոյն օրերուն այցե-
լող ծերուկ քահանայէ մը « Ողորմեսցի » խնդ-
րեց , դերադոյն ճիգով ու բառ առ բառ ար-
տասանելով ամբողջ « մեղայն » : Յետոյ մաս-
նաւորեցաւ ըստ եկեղեցական կանոնի , ինքն
իր ձեռքը ընդունելով Ս . Հաղորդը : Էլ պատ-
րաստ էր Հոգէառին . . . իր տագնապաղին
վայրկեաններուն՝ երբ նկատէր որ կը նեղ-
ուինք , — ո՛ղջ եմ , կ'ըսէր , բարի հրեշտակը
դեռ չէ հասած : շատ հետի՛ չէ , որ երթամ
հասնիմ հաղար տարուայ մեռելներուն : Դեռ
երկու օր ունիմ , ըսաւ :

Եւ իրա՛ւ , երկ օրէ վերջ՝ Մայիս 5ի
կիրակի իրիկուն , ժամը 2 ին՝ անայլայլ հա-
ւատքով Աստուծոյ բարի հրեշտակին կը յանձ-
նէր իր քաղցր ու թաշկուկ հողակը : Մին-
չեւ հողեվարքի ահաւոր հռնդիւնը՝ էրած ու
կորած լեզուով յիշեց սիրելիները , օրհնեց
զամէնքը եւ փակեց աչկունքն յաւիտեան :

* * *

Բարիւոյսը դեռ չճեղքուած՝ դուռ ու դուէրք
ծածկուած էին երկսեռ ժողովրդով՝ որոնց ա-
մենքն ալ իրենց ցաւակցութիւնները կը յայտ-
նէին ծերուկ ու համեստ երիցուն մահուան
համար , միշտ կրկնելով իրենց մեռելափաղ-
թանքը — քաղցր եղնի քու դատաստանը ,
հայրապետաց դասը դասուիս , դրախտի լու-
սուն մէջ թաթխուի քո հոգին . . . :

Ծաղկած ու ծագած էր կուլան — մայի-
սի ճառագայթաւոր արեգակը երկինքի ջրնջ
ու խոտան ժանդառիէն , անմահ առատու-
թեամբ՝ արարած աշխարհին վրայ թափելով
լուսեղէն սո՞ժառ հեղեղ մը : Ջողիկները՝ որ-
չափ բարեգուշակ կը համարէին այս գեղեցիկ
օրը նոր հանգչող հոգիին համար . . . :

Առաւօտ՝ ժամ 2ին հասած էին վարդա-
պետ ու քահանաներ : Սկսած էր տան կարգը
եւ ապա յեկեղեցին հանդիսաւոր փոխադրու-
թիւնը : Բոլոր գիւղը սաքի վրայ էր , հարհան
գիւղացիներու շատերին էլ ներկայութեամբ :
Քահանայաթաղը ինչպէս յայտնի է , շատ քիչ
հեղ կը պատահի գեղերուն մէջ , մահաւանդ
գիւղացւոց համար շատ նուիրական է : Ամէնքն
էլ կը ջանան ո՛ր եւ է կերպով մասնակցել
յուզարկաւորութեան եւ թաղման ծառայու-
թեան :

Գիւղացւոց միահամուռ խնդրանքին համաձայն եւ այն յայտարարութեան վրայ թէ Տէր Հայրս այ փափօք ունեցած է, հաւանութիւն յայտնեցի որ իր չիրիմը բացուի նոր գերեզմանատան մէջ՝ ընդարձակ ու շնորհքով արտ մը, գիւղին հիւսիս, արեւմտեան, դարաստանին ու Ս. Կարապետի ճամբուն վրայ՝ զոր սիրայօժար նուիրեցին արտին տէրերը՝ Տ. Ղազարեանց Առաքելի Ազէկսանդր, Սեւորի Յակոբ եւ Յովոյի Ծնոտն՝ համակերպելով իմ առաջարկին։ Մեծօրէից աւանդութեամբ՝ շինականք պէտք կը տեսնեն, որ նոր գերեզմանատան մէջ՝ ամէնէն յառաջ՝ անպատճառ քահանայ մը թաղուի, որպէս զի հողը օրհնուի, սրբանայ ու նուիրական ըլլայ։ Հակառակ մերիններու եւ միամիտներու ընդդիմութեան թէ մինակ ու մալուլ թողելու չէ քահանային գերեզմանը, ես հաւանեցայ սակայն գիւղացիներու անկեղծ ու բարեմիտ առաջարկութեան։

Կէս օրէն տոռալ պաշտօնն ու պատարագ ժամին մէջ, ուր կատարուեցաւ օծման եւ աջամարտիրոս արարողութիւնը ի ներկայութեան երկսեռ բոլոր գիւղացիներու։ Տ. Եղիշէ Վարդ. Կարապետեան՝ միաբան եւ նախորդ անուոյ Ս. Կարապետի գաղթին՝ խօսեցաւ յուզեալ եւ կարճ դամբանական մը՝ յանուն նորոգ վանճանեալ Տ. Կարապետի Կօմիկայ քահանայութեան՝ օրհնութիւններ տալով ժողովրդին եւ անոր յետին ողջոյնն ու «մնաք բարովը» աւանդելով։

Ս. Պատարագի աւարաւմէն եւ եկեղեցւոյ կարգէն վերջ՝ եկեղեցական հանդիսով Տէր Հօր մարմինը փոխադրուեցաւ նոր գերեզմանատունը եւ ամփոփուեցաւ կոյս գերեզմաննոցին մէջ։

Նոյն երեկոյ՝ աման մէջ ճրագ-վառ, գեղացի կիները՝ մէկ մէկ վառման ճրագով ննջեցելոյն առնը կուգան՝ ճրագոյս գնելու՝ վանճանեւոյն հոգւոյն համար, որ ինչպէս ջոջիկները կաւանդեն՝ թաղումէն առաջ մարմնոյն վերեւը՝ եւ թաղումէն ետքը գերեզմանին վերեւ պիտի հսկէ, մինչեւ որ կատարուի աշգիւն կարգը, ու «Փառք ի բարձունս» երգուած ատեն՝ երեք անգամ խոնարհութիւն տալով մարմնոյն մնաս բարով կ'ըսէ ու կը

մեկնի։ Քահանաներուն համար՝ եօթն օր առաւօտ՝ այգ եւ երեկոյ ամբօի կանանկը պիտի երգուին։ Նաեւ ամէն օր պատարագ ու ճրագ-վառ։

Եօթին հանդիսաւոր պատարագ ժամին մէջ եւ այգ՝ գերեզմանին վրայ, Լստ ան խորան սովորութեան՝ ինչպէս թաղման, նոյնպէս եօթին՝ աւանդական հարիսայով՝ հողը ճաշ բոլոր գիւղացիներուն։ Քառասունքն ու տարեկիցէն զաւ՝ հանգուցելովն սնունդ բայ-բաժինը պիտի արուի ամէնէն աղքատ գրացիին։

Տէրութիւն գերեզմանը պատարակու համար՝ չորեքշաբթի օրը գեղացիք արձկեցին լճերը եւ լեռը բարձրացան, հսկայ չորեքշաբթի բերելու, զոր փոխադրեցին ԿԿ հոգ. կու գումէշներով եւ գութանի երեք շիթանքով, ու թաւակցին գերեզմանին վրայ, նոր մաքարին մէջ գետնուեցաւ իր խաչարձանն ալ, որ շատոնց պահուած էր ժամին մէջ։

Վերջին անգամ կ'այցելեմ իր գերեզմանը։ Ողորմի իր հոգւոյն եւ հանգիստ սովորութեան։

Ահա՛ գերեզմանը — Սողոմոնի ունկնդրելը եւ ահա՛ Աւետարանին յախանախ նութիւնը, Կեանքը մահով մը կ'անհետի եւ մահը կեանքով մը կը սկսի։ Հոգեղէն անպական կեանք անիմանալի աշխարհին՝ Աստուծոյ լուսեղէն հրեղէն օթեւանին մէջ։

Ու հաւատացեալը ջերմեռանդօրէն կը գոչէ՝ «Երանի՛ այն լուս-կեանքին»։

ԳԵՂԱՄ

ՌՈՊԵՐԴ ՔՈԼԵԾ

Վարժարանիս յառաջիկայ տարեկանը պիտի սկսի Երկու շաբթի Սեպտ. 2/15, Կարգադրութիւնների եղած են նոր գիւրութիւններ տալու վաճառականական ուսման համար։ Մնայուն բժիշկ մը՝ աշակերտաց առողջութեան, մարմնամարզներուն ու խօսքուն, ինչպէս նաեւ վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ պիտի հսկէ։ Այս տարի կը բացուի նաեւ փոքր աղայի յատկացեալ նոր շէնքը, մասնաւոր հսկողութեան տակ, ուր կարելի պիտի ըլլայ այսուհետեւ մինչեւ տասը տարեկան աշակերտներ ընդունիլ։

Արժուեստի Կ. Ս. Ի. Թ. Ի. Ժ. Ե. Լ. Ե.

Տպագրութիւն Ե. ՄԱՏԻՔԻՆՍԻՆ

Կ. Պոլիս, Ֆինանսերու Եղբայր, Թիւ 27

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ
Յաճախորդաց դիրքերեան
համար

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ
Եթէ կ'ուզէք ամէն
տեսակ գոհարեղէններ
ունենալ՝ դիմեցէ՛ք
Կ. Պոլիս, Ոսկերչաց
Շուկայ մեծ փողոց թիւ 13



Հերմայի վաճառատուներ ունին եւրոպական
ճաշակով պարարատուած գոհարեղէններ,
ամենքն ալ առանձնակարգ ըլլալու պայմանաւ:
Հերմայի վաճառատուներ գինեքն անմիջեղի են:
Հերմայի վաճառատուներ ունին արծաթեղէն
առարկաներ:
Հերմայի վաճառատուներ ունին ժամացույցներ
եւ արծաթեայ գաւազաններ (պարսփօն):

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարիւրին քան կանխիկ, մնացեալին հա-
մար շարաթակահան հարիւրին հիմն զճարու՛մ:
Կանխիկ գնողին համար 100ին 5 գեղչ,
Գործածուած գոհարեղէններ՝ եթէ փառ-
ուած չեն՝ 100ին 10 գեղչով ետ կ'առնուին:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
գժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

Քուրթ, ռաբի՞նտ ձեւերի՞նք ռաբի
միանգամայն մեհեմետներ
կը գոցուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն
աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ
գիւրազորածեղին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի
մէջ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառա-
տանց մէջ:

ԲԵՐՍ, ՄԵՃ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դիմաց.

- | | | |
|--------|---|--|
| ԿԱԼԱԹԱ | { | 1. Սինկէր խառն, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին Կայարանին Դիմաց |
| ՊՈԼԻՍ | { | 1. Սուլթան Համամ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կասաբեալ երաշխաւորութիւն

Մասնանիղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՇԱՐԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՌՈՒՄՆԵՐ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՋԱԿ

Վարժարանին նոր տարեշրջանը կը սկսի Սեպտ. 10 (Ն. Տ.) Դշ. : Տարեթիւշակն է գիւշերօթիկներուն համար 16 ստիլի օամ. որուն կէսը վճարելի է սեպտեմբերի սկիզբը, եւ միւս կէսը՝ յունվարի մէջ :

Վարժարանիս Տնօրէնին որդին, Մր. Ռ. Ջէմալը, Քանաթայի մէկ նշանաւոր համալսարանին մէջ փայլուն ընթացք մը աւարտելէ եւ Ուսուցիչ Արուեստից տիազոսին արժանալէ վերջ, կը վերադառնայ յառաջիկայ տարի, ստանձնելու համար հաստատութեանս Անգլիերէն դասերուն մեծագոյն մասը, նախապատրաստական կարգերէն մինչեւ բարձրագոյն կարգը, եւ աշակերտները վարժեցնելու համար այդ լեզուաւ ինչպէս գոհելու նոյնպէս խօսելու մէջ. իր դասախօսութեան լեզուն պիտի ըլլայ միայն Անգլիերէն : Միեւնոյն ժամանակ, պիտի շարունակուին անգլ. հայ. թարգմանութեան վարժութիւնները ընդհատապէս ինամքին տակ :

Ջուլիական արութեան կանոնաւոր դպրոցի տարուի փափագող աշակերտներուն տարեկան 2 օամ. սկիլի յաւելումովն վճարումով :

Վարժարանին պարտէզին կցուեցան վերջերս բնորոշակ գետիններ, որոնք նոր դիւրօթիւններ պիտի տան աշակերտներուն զրատանքի ժամերը աւելի հաճելի ընելու :

Աւելի տեղեկութիւններու համար գինի Մր. Ռ. Ռ. Բիթի, Պայպըլ-Հատու, Կ Պոլիս, կամ վարժարանիս Տնօրէն Տր. Ռ. Ջէմալը, նամակները ուղղելով Պայպըլ-Հատու :

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ՈՍԿԵՂԷՆ ԲԱՆԱԼԻ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԵՁՈՒԻ

360 ԵՐԵՍ

Խիստ կարճ ժամանակի մէջ կ'ուսուցանէ կարգալ եւ հատկապէս, խօսիլ ու շարադրել գիւրբի եւ զուարճալի կերպով : Կեդրոն Ստամբուլում վաճառատուն :

Գին 15 դահեկան :

ԻՒՆԻՅՈՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ շէնք	240,000,000 ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ շէնք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏԵՆԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐԵԼԷ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները : Շահարաթիւններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրողը ՋԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ օտաւաթաթիւններու բաղձան (accumulation des b n fices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեւամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Թահապուրուն խան, Օամ. Պանֆալին դիմացը Գործակալութիւնք Թուրքիո գլխաւոր քաղաքաց մէջ